

# ՆԿԱՐԱԳԻՐ

## առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-ՄԴ-24/1 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Մեդալ՝ իրենից ներկայացնում է 40 մմ տրամագծով միակողմ պատկերով և կորածև նիստերով ութանկյուն: Պատրաստվում է պղնձի հատուկ համաձուլվածքից և պատվում բարձր 999 հարգի ոսկով: Մեդալի հիմնական գույնն է «ոսկեգույնը»: Ութանկյան կենտրոնում առկա է 30 մմ տրամագծով շրջան, որի կենտրոնում պատկերված է Կոմիտեի խորհրդանիշը և շենքը: Խորհրդանիշը եզերված է Էմալապատ եռագույն շրջանով (կարմիր, կապույտ, նարնջագույն): Մեդալի դիմերեսին շրջանաձև առկա է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ» գրառումը, որի սկզբից և վերջից կաղնու տերևներ են, իսկ տերևների մեջտեղում պատկերված է «10» թիվը: Մեդալի դարձերեսին՝ կենտրոնում առկա է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ» և «2014-2024» գրառումը, իսկ ներքևի հատվածում տեղակայված է մեդալի հերթական համարը: Մեդալն ունի հնգանիստ կախիչ՝ 39x27x39x24x24 չափերի, որը երեսպատված է 24 մմ լայնություն ունեցող մետաքսե մուգ կապույտ ժապավենով: Ժապավենի կենտրոնով անցնում են 2 ոսկեգույն զուլակներ: Տուփ՝ չափերը՝ 100x110մմ, բարձրությունը 30մմ, կազմված կազմարարական 2մմ հաստությամբ սովորաբար թղթից, երեսպատված դիզայնի փայլով: Տուփի հատակը պատված է արհեստական թավիշով, որի վրա տեղադրված է սպունգ 10մմ հաստությամբ: Ներսի կենտրոնական հատվածում կրծքանշանի չափերին համապատասխանող կտրվածքով՝ արհեստական թավշեպատ, իսկ կրծքանշանը վերևից փակվում է տուփի փակվող հատվածի ամբողջ երկայնքով 4մմ հաստությամբ սպունգով: Տուփի կափարիչը մի կողմից ամրացված է տուփին, իսկ դիմացի մասից փակվում է նիադիմովի մազնիսով (10մմ տրամագիծ, 2մմ հաստություն, N 35 ուժով): Կափարիչի վրա ՀՀ քննչական կոմիտեի լոգոտիպի ՍՄ տպագրություն:</p>

Տուփի գույնը մուգ կապույտ: Ապրանքի նմուշը պետք է նախապես համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքը պետք է լինի նոր և չօգտագործված: Ապրանքների մատակարարումը, բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ОАО ЕЮЗ имени ЭМИЛЯ ГРИГОРЯНА в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՔԿ ԲԱԶԱՊՁԲ-ՄԴ-24/1 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	